ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՐԻ ԱՐՎԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Վաղ և ուշ միջնադարի հայ մատենագրությունը քիչ տվյալներ է պահպանել հնուց ի վեր Հայաստանում իւոր արմատներ ու նշանակալից զարգացում ունեցող ճարտարապետության և քարի արվեստագործության վերաբերյալ։ Թ. Թորամանյանի հավաստմամբ «մեր պատմագիրները կամավորապես անտեսեր են հայ ճարտարապետության և գեղարվեստի մասին գրելը»[1]։ Հիշատակելով որևէ հուշարձան կառուցել տվող պատվիրատուի կամ մեկենասի անունը, նրանք հաճախ լռության են մատնել հուշարձանը կերտող վարպետներին ու շինարար բանվորներին։ Ի տարբերություն պատմագիրների, մեր ժողովրդական բանասացները իրենց առասպելներում, վեպերում, հեքիաթներում, երգերում և ուրիշ ստեղծագործություններում բազմիցս անդրադարձել են այդ վարպետներին ու բանվորներին, վերարտադրել նրանց կյանքն ու կենցաղը, նրանց ջանքերով կառուցված ամրոցներն ու կամուրջները, վանքերն ու արձանները։ Եվ դա հասկանալի է։

Քարի հետ գործ ունեցող, քարից հաց քամող հայ աշխատավորը չէր կարող անուշադրության մատնել իր միջավայրից ելած այն մարդկանց, ում ջղուտ ձեռքերով ու վառ երևակայությամբ հղկվել, ձև ու կերպարանք էին ստացել իր հայրենիքի տարածքում առատորեն սփռված անմշակ քարերն ու ապառաժները, դարձել պալատ, տաճար, կամուրջ, արձան, կոթող ու խաչքար. ստացել նռան, խաղողի, արծվի, խոյի, եղջերուի տեսք։

Հայ ժողովրդական բանահյուսության մեջ ճարտարապետության և քարի արվեստագործության վերաբերյալ ուշագրավ արձագանքներ են պահպանվել, նախ և առաջ, մեր վաղնջական առասպելներում։

Իր «Հայոց պատմության» մեջ սեփական բառերով հաղորդելով Տորք Անգեղի ժողովրդական առասպելի բովանդակությունը, Մովսես Խորենացին հիշատակում է, թե ինչպես նրա հերոսը ոչ միայն հսկայական ապառաժներով հեռու է վանում Սև ծովի կողմից իր հայրենիքին սպառնացող թշնամական նավերը, այլև եղունգներով որձաքարեր է հղկում և դրանց վրա արծիվներ և ուրիշ պատկերներ քանդակում. «... երգէին նմա բուն հարկանել զորձաքար վիմաց ձեռօք, ուր ոչ գոյր գեղութիւն, և ճեղքել ըստ կամաց մեծ և փոքր. և քերել եղնգամբքն և կազմել որպէս տախտակ, և գրել նոյնպէս եղնգամբք իւրովք արծուիս և այլս այսպիսիս»[2]։

---

1 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. Ա, Երևան, 1924, էջ 366։

2 Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 115։

Խիստ նշանակալից այս հիշատակությունը ժամանակագրական և գեղարվեստական որոշակի ընդհանրություններ է հուշում մեզ Սյունիքի լեռներում, Արագածոտնում և այլուր վերջին ժամանակներս հայտնաբերված ժայռապատկերների և գվարթնոցյան հռչակավոր արծիվների հետ[3]։

Որոշ հայագետների կարծիքով Խորենացու հիշատակած առասպելի մեջ պահպանվել են քարի դարի ժամանակաշրջանի բնորոշ դծեր[4]։ Հաստատապես դժվար է պնդել, թե որքանով է ճիշտ այդ վարկածը։ Մի բան, սակայն, պարզ է, որ Տորք Անդեղի առասպելը հնօրյա ծագում ունի և, ամենայն հավանականությամբ, կապված է Հայկական լեռնաշխարհի նախաբնիկ այս կամ այն ցեղի դիցարանի հետ։ Կարծիք է հայտնվել, որ Տորքի մեջ պետք է տեսնել խեթական Տարխու կամ Տարքու աստծու արձագանքը[5]։ Ներկա դեպքում էականը առասպելի մեջ պահպանված այն հիշատակությունն է, ուր խոսվում է Տորքի կողմից որձաքարե վեմերի վրա փորագրված ժայռապատկերների մասին։ Պատմական թանկարժեք մի վկայություն է դա, որով անուղղակի բացատրություն են ստանում ոչ միայն քարի արվեստագործության խոր արմատները Հայաստանում, այլև ակնարկվում է նույն այդ արվեստի նախնական մակարդակը։

Խորենացու «Հայոց պատմության» մեջ տեղ է նմանօրինակ մի այլ ուշագրավ հիշատակություն ևս։ Բառացի բերելով Գողթան դավառի վիպասաններից սեփական ականջներով լսած վիշտպաքաղ Վահագնի հայտնի առասպելական երգը, պատմիչն անմիջապես ավելացնում է ժողովրդական բանասացների մի ուրիշ հաղորդում ևս, ըստ որի Վրաստանում կանգնեցված է եղել Վահագնի հասակաչափ արձանը, որին, իբրև աստծո, զոհեր են մատուցել։ «Այլ ասեն,— գրում է պատմիչը,— զսա և աստուածացեալ, և անդրի՛ի Վրաց աշխարհին զսորա չափ հասակին կանգնեալ՝ պատուէին զոհիւք»[6]։

Ճիշտ՝է, բանասացներից բերված տվյալ վկայության մեջ չի նշված արձանի որտեղ կերտված լինելը, սակայն, կարծում ենք, որ այն Հայաստանից պետք է անցած լիներ հարևան Վրաստան։

Հայկական լեռնաշխարհը հնուց եղել է Վահագնի պաշտամունքի բնօրրանը։ Տարոն գավառի Աշտիշատ կոչված վայրում գտնվող դիցարան-մեհյանում, ի թիվս ուրիշ աստվածների, կանգնեցված է եղել նաև Վահագնի արձանը։ Այդ մասին վկայություններ ունեն V և հետագա դարերի հայ պատմիչները[7]։ Հայտնի է նաև, որ Վահագնի պաշտամունքը, իբրև ջուրն արգելող Վիշապին ոչնչացնող բարի ուժի, Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել դեռևս նրա նախաբնիկ ցեղերի հնագույն դիցարանում։ Այդ մասին են վկայում մեր դարի 50-ական թթ. կեսերին Փոքր Ասիայի Կոմմագենե կոչված հնավայրում կատարված պեղումները, որոնց շնորհիվ հայտնաբերվեցին հեթանոսական

3 Ս. Մարգարյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 113, 118։ Հ. Մարտիրոսյան, Հ. Իսրայելյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, 1967։

4 Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. Ա, Երևան, 1931, էջ 307—308։

5 Ն. Ադոնց, Տորք աստված հին Հայոց (տե՛ս «Հուշարձան», գրական ժողովածու, Վիեննա, 1911, էջ 239)։

6 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 85։

7 Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, էջմիածին—Տփղիս, 1909, էջ 423—424։ Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 38։ Թովմա Արծրունի, Պատմութիւն Տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 53։

աստվածների մի շարք անդրիներ, այդ թվում նաև Վահագնի անդրին։ Հիշյալ հնավայրը ասորա-բաբելական և ուրարտական աղբյուրների Կումմահա վայրն է, որը հունա-լատինական սկզբնաղբյուրներում հիշատակվում է Կոմմագենե ձևով։ Վերջինս մ. թ. ա. IV—I դդ. մտել է նախ Փոքր, ապա Բարձր Հայքի մեջ և կոչվել է Կումախա։ Դա Եփրատ գետի աջ ափին գտնվող Դարանաղյաց գավառի Կամախ երկրամասն է՝ Անի քաղաքով։ Դատելով պեղումների ընթացքում հայտնաբերված Վահագնի արձանի արտաքին տեսքից, այն յուրովի հիշեցնում է մեզ Գողթան երգիչների առասպելական երգում Վիշապաքաղ Վահագնին տրված նկարագիրը (խոշոր աչքեր, թավ մորուս...)[8]։

Քարի արվեստագործության հուշարձանների արձագանքների առումով, առասպելների հետ միասին, նշանակալից են նաև մեր հնօրյա հրաշապատում հեքիաթները։ Քիչ չեն այն դեպքերը, երբ այս կամ այն հեքիաթի գործող անձերից ոմանք սկսում և կարճ ժամկետում հաջողությամբ ավարտում են որևէ հոյաշեն կառույց (ամրոց, աշտարակ, պալատ)։ Մի հեքիաթում, օրինակ, պատմվում է, թե ինչպես յոթ տարի առաջ մահացած վարպետ Մուրատը, հանկարծ հարություն առնելով, մեկ շաբաթվա ընթացքում պալատ է բարձրացնում թագավորի համար։ Մի ուրիշ հեքիաթում, ցախահավաքը կախարդական ճրագկալի հրաշագործ զորությամբ քառասուն օրում այնպիսի ապարանքներ է կառուցում, որոնց մոտ նսեմանում են արքայական շքեղ պալատները։ Երրորդ հեքիաթում՝ Վարդիթեր անունով մի գեղեցկուհի, հրաշածին աղջիկ, որի լողացած ջուրը ոսկու և արծաթի էր վերածվում, ինչպես իր խեղճ ծնողների, այնպես էլ քսաղաքում իրեն սիրալիր ապաստան տված աղքատ պառավի համար, հատուկ ճարտարապետ և շատ վարպետներ, քարտաշներ ու բանվորներ հրավիրելով, չտեսնված ապարանքներ է կառուցել տալիս[9]։

Ուշագրավ է մասնավորապես մեր ժողովրդական հեքիաթներից մեկը, որը կրում է «Հովվի կամուրջ» վերնագիրը[10]։ Գեղատեսիլ ու հաղթանդամ հովվի և նույնքան գեղեցիկ արքայադստեր սիրո սրտառուչ պատմությունն անելով հեքիաթասացը հաղորդում է, թե ինչպես թագավորի դուստրը, երկար որոնումներից հետո, բարեբախտ դիպվածով գտնում է կորցրած սիրեցյալին և, ի հավերժացումն իր երջանկության, ուխտ է անում այնպիսի կամուրջ կառուցել տալ, որը «դիմանա մինչև աշխարհի վերջը»։ Հեքիաթում մի առ մի թվարկվում են այն բոլոր շինանյութերը (քար, փայտ, ձվի դեղնուց, կիր...), որոնցով Եփրատ գետի վրա պիտի բարձրացվեր վերոհիշյալ կամուրջը։ Այդ շինանյութերը, Թորամանյանի վկայությամբ, կիրառվել են հին Հայաստանում աշխարհիկ և հոգևոր հուշարձաններ կառուցելիս[11]։

Ժողովրդական հեքիաթասացների վառ երևակայության արտահայտությունը լինելով, հիշատակված արձագանքները, միաժամանակ, բնորոշ խորհրդանիշեր են Հայկական լեռնաշխարհում ժամանակին կառուցված քարակերտ իրական շքեղ շենքերի և դրանց համար օգտագործված համապատասխան շինանյութերի։

---

8 Գ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 32, նկ. 5։

9 «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ. 1, Երևան, 1959, էջ 35, 359, 363։

10 Ե. Լալայան, Ջավախքի բուրմունք, Թիֆլիս, 1892, էջ 61—63։

11 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 134—146։

Հայոց ազգային-ժողովրդական մեծ վեպի՝ «Սասնա ծռերի» գլխավոր հերոսները, հատկապես Սասունցի Դավիթը, հանդես են գալիս ոչ միայն իբրև հայրենի հողը արտաքին թշնամիներից պաշտպանող քաջարի դյուցազուններ, այլև՝ բերդեր, պարիսպներ, կամուրջներ, վանքեր կառուցող շինարարներ։ Վեպի առաջին ճյուղում պատմվում է, թե ինչպես երկվորյակ եղբայրներ Սանասարն ու Բաղդասարը բարձրացնում են Սասնո բերդը։ Երկրորդ ճյուղում հիշատակվում է Մեծ Մհերի կողմից Մարութա վանքը և Ծովասարի շուրջը պաշտպանական պարիսպ կառուցելու մասին։ Երրորդ ճյուղում վիպական դրսևորում են գտել շինարարական այն եռանդուն ջանքերը, որ գործադրում է Դավիթը Մսրա Մելիքի կողմից ավերված Սասնո բերդերի ու վանքերի վերականգնման համար։ Չորրորդ ճյուղում Փոքր Մհերը կամուրջ է կապում Սասնո գետի վրա և հիմնում է Ջղիրե քաղաքի Բրջա-բալաք անունով բերդը։

Առանձնապես ուշագրավ է Սասնո բերդի շինարարության պատմությունը.

... Ու գնացին երկու աղբեր,
Էյան սարերի գլուխ,
Դիշեր-ցերեկ՝ արին մեկ,
Մեկ վերունի երկիր հասան,—
Քարափրթա, ձոր, անդունդք, քար ու կապան...
Էդ երկրին շատ հավնեցան...
Ու որոշին՝ իրենց համար բերդ մի շինեն։
Կ'երթա, կը կտրի գիր տակի մեծ գետ։
Տեսան, անուշ ջուր էր, ու տեղն էլ անուշ։
... Նստան վեր էդ ջրի ական,
Ու որոշին՝ իրանց համար բերդ մի շինեն։
. . . . . .
Սանասար ջոջ քարափներ շալկեց, էրեր,
Ջոջ ջոջ քարեր էլ իր աղբեր էրեր։
... Էնոնք էնքան զորեղ էին,
Որ քարե սան քարե սուն զարգին, ձագ թալեցին։
Մեկ տարի բոլոր էնոնք էսպես աշխատեցին,
Մեկ տարի որ լրացավ,
Նոր էնոնց բերդն եկավ գլուխ[12]։

Վիպական հիշյալ պատումն ունի նախնադարյան բերդ-շենների (կիկլոպյան կոչված կառույցների) տիպիկ նկարագիրը։ Այդ բերդ-շենները, ինչպես հայտնի է, հիմնվում էին գետախառնուրդների կամ ջրերի ակունքների մոտ, ձորաբերաններին կամ դժվարամատչելի լեռների վրա։ Դրանք սովորաբար կազմված էին լինում որձաքարերի հսկայական զանգվածներից, որոնք հաճախ առանց շաղախի դրվում էին իրար վրա։ Այդ կառույցների հետքերը կարելի է գտնել աշխարհի տարբեր վայրերում, նաև Արևելյան ու Արևմտյան Հայաստանի զանազան գավառներում։ Դրանց օրինակներից է նաև Սասունում, Ծովասար կոչված լեռան հարավային ստորոտին գտնվող Սասունի կամ Սանասունի բերդը, որը հայտնի է նաև Դավթի բերդ անունով։ Ականատեսի հավաստմամբ վերջինս շինված է եղել միակտուր ժայռի հիմքին, 1—3 մետր երկարություն և 1 մետր լայնություն ունեցող քարերով։ Արտաքին պատերի

12 «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոս, Երևան, 1939, էջ 30—31, 41—42։

մեջ բերդն ունեցել է ագուցված սյուներ, որոնք մտած են եղել քարերի մեջ և պահել են մակերեսի հավասարությունը։ Նույն ականատեսի հավաստմամբ Դավթի բերդի արևմտյան կողմից հոսել են Կապաս, իսկ արևելյան կողմից՝ Կուս կամ Բողրկան գետերը[13]։

Սասնո բերդի վիպական նկարագրության համար ամենայն հավանականությամբ հիմք է հանդիսացել Դավթի կամ Սանասունի իրական-պատմական բերդը, որն իր ծագումով ավելի հին է, քան ինքը վեպը։

«Սասնա ծռերի» նույն կարգի դրվագներից է նաև Մսրա-Մելիքի մարդկանց կողմից ավերված Մարութա վանքի վերակառուցման պատմությունը.

... Դավիթ էդ լսեց, դարձավ,
էզար շոքեր գետին, գնաց.
Ձեռներ էզար գետին, համբուրեց.
Իր նետ-աղեղով էդա մարմար քարի բոլոր
Ռիծ մի քաշեց, նշան արավ,
Լուսու ձևով խորաններ կամար քաշեց,
Սեղանատեղ քաշեց, հիման տեղ էլ քաշեց,
Ասաց.—Էսա էսպես տի շինվի[14]։

Շարունակության մեջ պարզվում է, թե ինչպես Դավիթը հորեղբոր միջոցով բազմաթիվ վարպետներ ու բանվորներ է բերել տալիս, սկսում ու ավարտում է վանքի շինարարությունը.

... Առավոտուն Հովան էլավ, կանչեց ձենով.
. . . . . .
Էնոր ձեն չուր յոթ քաղաք լսան
Էդ յոթ քաղքի բանողներ, ուստա մարգեր
Հաղար-հաղար թափվան,
Էլան, էկան Հովանի տուն։
. . . . . .
Ուստեք կը կանգնեն պատի վերա,
Դավիթ են ջոջ քարեր ձեռ կը տա,
Կը վերցու, կը բերի դնի իր տեղ.
Բանողներ էլ էնա պստիկ քարեր կը բերեն,
Ուստեք էդ պստիկ քարեր կը տան ջոջ քարերու բոլոր։
Բանողներ տիլ կը շինեն, կը տան ուստեքին,
Ուստեք տիլ կը դարգեն էդ քարերու բոլոր։
Ջուր մութ կը տա գետին,
Էդ վանք կը գլխեն, կը լմնցուցեն[15]։

Լինելով որոշակի պատմական հիշողության արձագանք[16], բերված դրվագը, սակայն, չպետք է նույնացվի իրական պատմության հետ։

Նկատի առնելով այն, որ Սասնո գավառի Համանուն լեռան վրա գտնվող Մարութա վանքը իրականում եղել է մի փոքրիկ մենաստան կամ մատուռ[17], նրա կառուցման հիշյալ նկարագրությունը, բնականաբար, վիպական չափազանցության հետևանք պետք է համարել, չնայած շինարարության հետ կապված շատ մանրամասներ ըստ էության ռեալ են։ Ակներևաբար «Սասնա ծռեր»

13 Վ. Պետոյան, Սասնո աղգագրությունը, Երևան, 1965, էջ 18—20։
14 «Սասունցի Դավիթ», էջ 223—224։
15 Նույն տեղում, էջ 225—226։
16 Մ. Աբեղյան, Երկեր, հատ. 1, Երևան, 1966, էջ 359։
17 Հ. Ոսկյան, Տարոն-Տուրուբերանի վանքերը, Վիեննա, 1953, էջ 258։

վեպի ստեղծողներն ու ասացողները տվյալ պատմությունն անելիս նկատի են ունեցել ոչ այնքան Մարութա վանքի առարկայական օրինակը, որքան Հայաստանի տարածքի վրա սփռված բազմաթիվ հոյաշեն վանքերը։

Իր ճարտարապետության վիպական նկարագրով Մարութա վանքը հեռվից-հեռու հիշեցնում է մեր հնօրյա խաչաձև եկեղեցիների կառուցվածքն ու շինարվեստը, որոնց նմուշները քիչ չեն թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում (Հռիփսիմե, Կարմրավոր, Բջնի, Լմբատ և այլն)։

Բանահյուսական ոչ մի այլ տեսակ Հայաստանում այնքան հարուստ չէ ճարտարապետության և քարի արվեստագործության հուշարձանների արձագանքներով, որքան ժողովրդական ավանդությունները։ Անդրադառնանք դրանցից մի քանիսին։

Էջմիածնի մայր տաճարի շինության մասին ավանդությունն ասում է, թե հայոց Տրդատ թագավորը յոթ օրվա ճանապարհ կտրելով հասնում է Մասիս սարի գագաթը և այնտեղից շալակով հսկայական ապառաժներ է կրում շինարարության համար։ Երբ սկսում են կառուցել տաճարը, սրա հիմքը պարբերաբար քանդվում է։ Գրիգոր Լուսավորչին երազում հայտնվում է Քրիստոսը և ասում, որ հիմքի քանդվելու պատճառը այնտեղ բուն դրած չարքերն են։ Քրիստոսը ձեռքի ուռով հարվածում է չարքերին և ցիրուցան է անում նրանց։ Դրանից հետո տաճարի կառուցումը անխափան հասնում է իր բարեհաջող ավարտին[18]։

Լուսավորչի երազի և չարքերի վերաբերյալ հաղորդման հրաշապատում հենքի վրա ավանդության մեջ ներհյուսված են պատմական վերապրուկներ։ Դրանք յուրովի հավաստում են տաճարի հիմնադրման հնությունը, կառուցման համար օգտագործված շինանյութի բնույթը, նրա տեղում նախկինում գոյություն ունեցող պաշտամունքային վայրի փաստը։

Տաճարի հնօրյա ծագման առասպելավիպական անուղղակի վկայությունն է Տրդատ թագավորի կողմից Մասիսի կատարից հսկայական ապառաժներ կրելու վերաբերյալ հաղորդումը, որի մեջ կարելի է նշմարել Վաղարշապատի շրջանում առկա նախնադարյան հասարակության բնակավայր բերդ-շենների արձագանքը, որոնք, ինչպես հայտնի է, կառուցվում էին իրար վրա դրված անմշակ քարի հսկայական զանգվածներից[19]։ Նույնատիպ մի վկայություն է նաև չարքերի բնակության տեղում տաճար հիմնելու ակնարկը։ Դա որոշակի հիշողություն է հնօրյա մեհյանների վայրերում քրիստոնեական վանքեր ու եկեղեցիներ կառուցելու՝ մեզանում ժամանակին գոյություն ունեցած սովորության։ Այս առումով պերճախոս ապացույց են Էջմիածնի տաճարի ներսում ճարտարապետ Ալ. Սահինյանի կողմից կատարված պեղումների միջոցին ի հայտ եկած հեթանոսական տաճարի հետքերը[20]։

---

18 Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 223։ Մեջբերված հաջորդ բոլոր ավանդությունները վերցված են այս գրքից։ Ավանդությունների վերջում փակագծերի մեջ նշված են գրքի համապատասխան էջերը։

19 Կ. Ղաֆադարյան, Խորհրդային Հայաստանի պատմական հուշարձանները, պրակ 3, Երևան, 1938, էջ 15—16։

20 Ալ. Սահինյան, Էջմիածնի մայր տաճարի սկզբնական տեսքը (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3, էջ 75)։

Գեղարդի վանքի վերաբերյալ ավանդությունը պատմում է, որ այն կառուցել են ազնվական ծագում ունեցող քույր ու եղբայր, նպատակ ունենալով իրենց մահվանից հետո անմոռաց հիշատակ թողնել աշխարհում։ Զիմանալով, թե ո՞րտեղից պետք է սկսել կառույցը, եղբայրը դիմում է աստծու օգնությանը։ Լուսաբացին քնից արթնանալով, նա իր կռանը գտնում է ապառաժի ծայրին։ Կռահում է, որ վանքի շինարարությունը այդտեղից պետք է սկսվի։ Քույր ու եղբայր անմիջապես գործի են անցնում։ Եղբայրը քանդում է ապառաժը, իսկ քույրն էլ քանդված քարերը մաղերի մեջ դնելով, բարձրացնում է ձորն ի վեր։ Աշխատանքը տևում է երկար տարիներ, մինչև որ երկուսով ժայռի մեջ ավարտում են իրենց ուխտած վանքի կառուցումը (226)։

Կասկածից վեր է, որ հրաշապատում այս ավանդության ծնունդ է տվել այն զմայլանքը, որ առաջ է բերել ժողովրդի մեջ Գեղարդի վանքը, Թորամանյանի բնութագրմամբ՝ «ամենեն ավելի փորձված արվեստագետներուն անգամ անհավատալի պատրանք թվալու չափ նրբությամբ, համաչափությամբ ու վայելչությամբ կերտված»[21] այդ աննման կոթողը։

Չունենալով համապատասխան գրավոր վկայություն, մենք չենք կարող որոշակի ասել, թե իրականում ովքեր են եղել վանքի նախագծող ճարտարապետը, կառուցող վարպետներն ու բանվորները և առհասարակ ինչ կերպ է իրականացվել արվեստի այդ հրաշալիքը. հայտնի է միայն հուշարձանի ժամատներից մեկի կառուցող վարպետի անունը (Գալձագ), որն արձանագրված է ժամատան գմբեթի նոնազարդ երիզի վրա և մեկ էլ այն, որ վանքը կառուցել է տվել Պռոշ իշխանի որդի Պապաքն իր Ռուզուքան կնոջ հետ, Հայոց ՉԼԷ (=1288) թվականին, ի հիշատակ իրենց հոգու[22]։

Անհամանական չէր լինի ենթադրել, որ ավանդության մեջ իբրև Գեղարդը ստեղծող անձինք հիշվող քույրն ու եղբայրը լինեին Պապաքն ու իր կին Ռուզուքանը, որոնք և ավանդախոսների երևակայության մեջ գրավել են վանքը կերտող ճարտարապետի, քարգործ վարպետների ու բանվորների տեղը։

Տաթևի վանքի ճարտարապետի մասին պատմում են, որ երբ նա ավարտում է գործը, հասնում գմբեթի ծայրին, վերից վար նայելով տեսնում է ձորի ահավոր խորությունը։ Նա սարսափահար սկսում է մտածել, թե ինչպես է ինքը ցած իջնելու։ Վարպետը ստիպված դիմում է աստծու օգնությանը և թեվեր է խնդրում նրանից, որպեսզի թռչի, անցնի անդունդի հակառակ կողմը։ Ասում են, թե իբր, լսելով ճարտարապետի աղերսանքը, աստված թևեր է տալիս, որոնցով նա թռչում, գնում է հեռու աշխարհներ։ Այդ առթիվ էլ վանքի անունը դնում են Տաթև (230)։

Առանց վարպետի բանվորները չեն կարողանում ինքնուրույն քանդել վանքի ներսի տախտակամածը։ Հարց ու փորձ անելով իմանում են, որ վարպետը Պոլսում է գտնվում։ Վանքի շրջակայքի բնակիչները մարդ են ուղարկում նրա ետևից, խնդրում, որ վերադառնա և հանի տախտակամածը։ Վարպետը հրաժարվում է ետ վերադառնալ։ Նա հայտնում է միայն տախտակամածը քանդելու գաղտնիքը։ Ուղարկված պատգամավորը վերադառնում է Տաթև և վարպետի տված ցուցումով քանդում են տախտակամածը։

---

21 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 349։

22 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք, մասն Ա, Վաղարշապատ, 1928, էջ 114, 143, 291։

Մի ուրիշ ավանդության համաձայն, երբ սկսում է կառուցվել Տաթևի վանքը, սրա ճարտարապետն ու վանքի առուն փորող վանականը պայման են կապում, թե իրենցից ով ավելի շուտ կվերջացնի գործը։ Երկուսն էլ սկսում են եռանդով աշխատել։ Ժամանակ անց, հեռվից նկատելով, որ ճարտարապետը ավարտելու վրա է վանքի կառուցումը, վանականը, պայմանը տանուլ տված չլինելու համար, որոշում է խաբել ճարտարապետին։ Զորի հակառակ կողմից նա կախում է մի հսկայական սպիտակ սավան, որը քամուց ծածանվելով, հեռվից ջրի ալիքների է նմանվում։ Վանքի գմբեթի վերջին քարերը շարելիս ճարտարապետը հանկարծ նկատում է այդ և կարծելով, թե վանականը արդեն ավարտել է առուն փորելը, գմբեթից իրեն ձորն է նետում և տեղն ու տեղը ջախջախվում (92)։

Կա մի ավանդություն էլ Տաթևի վանքին կից հայտնի գավազան-սյան վերաբերյալ։ Ըստ այդ ավանդության, երբ Լենկ-Թեմուրն իր հրոսակներով հասնում է Տաթև, տեսնելով վերոհիշյալ կոթողը, չարությամբ լցված հրամայում է արմատախիլ անել այն։ Անմիջապես բերում են գութանի երկաթե շղթան, փաթաթում գավազան-սյան շուրջը և շղթայի ծայրը ամրացնելով տասը զույգ գոմեշների լծից, փորձում են տեղահան անել սյունը։ Բռնակալի կամայականությունը, սակայն, չի կատարվում։ Գութանի շղթան կտրվում է և գոմեշները գահավիժում են անդունդը։ Տեսնելով այդ՝ Լենկ-Թեմուրը հրաժարվում է իր մտադրությունից, վախեցած շտապ հավաքում է հրոսակներին և հեռանում Տաթևից (230—231)։

Առաջին ավանդության մեջ կա բուն պատմական մի փաստի արտացոլում։ Տաթևի վանքի կառուցման աշխատանքներին ականատես պատմիչ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ վանքը 930 թ. ամբողջովին նկարազարդվել է այն ժամանակվա վանահայր Հակոբ եպիսկոպոսի նախաձեռնությամբ։ «Այս Յակոբ,— գրել է Օրբելյանը,— ետ ածել նկարիչս և զաւառախս, որ է պատկերադրդ ի հեռաւոր աշխարհէ Ֆռանգ ազգաւ (իմա Ֆրանսիացի—Ա. Ղ.) և զլուսաճեմ յարկս աստուածաբնակ տաճարիս բազում և անհուն ծախիւք ետ նկարել զբովանդակն ի վերուստ մինչև ի վայր...»[23]։

Նշված տեղեկության մեջ, ըստ երևույթին, պետք է տեսնել վանքը կառուցող և այն ավարտելուց հետո հեռավոր աշխարհներ մեկնած վարպետի վիպական յուրօրինակ արձագանքը։

Բացառված չէ, որ Տաթևի վանքը նկարազարդող տարաշխարհիկ վարպետը միաժամանակ եղած լինի նաև նույն այդ վանքը կառուցող ճարտարապետը։ Այդպիսի դեպքեր եղել են ինչպես մեզանում, այնպես էլ այլուր։

Պատմական փաստ է նաև Լենկ-Թեմուրի հարձակումը Տաթևի վանքի վրա և նրա հուսահատ հեռանալն այնտեղից։ Դեպքերին ժամանակակից պատմիչի վկայությամբ[24] Լենկ-Թեմուրը ոչ միայն հասել է Տաթև, այլև անխնա կոտորել է տեղի բնակչությանն ու վանականներին, հրկիզել է վանքը, կողոպտել, ավերել է այնտեղ պահպանվող բազմաթիվ ձեռագիր մատյանները, փորձել է հիմնահատակ անել նաև վանքին կից գավազան-սյունը, բայց

---

23 Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 256—257։

24 Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 20—32 և հտ.։

ապարդյուն, քանի որ այն ուներ ճարտարապետական ուրույն կառուցվածք (հրելու ժամանակ որոշ տատանումներ տալով, նորից մնացել է կանգուն վիճակում)։

Ահա թե ինչ է գրում Ստեփանոս Օրբելյանը. «Ապա խանդացեալ ընդ այս շարին ոչ կարաց տանել. այլ մտեալ ի սիրտ իսմայէլական զօրագլխացն որ ի Մովկան և ի Թալիշ, յԱհր և յԱրտաւէլ և յԱտրպատական. և գրգռեալ շարժեաց վասն համբաւոյ երևելի տանն։ Որք ձայն տուեալ միմեանց ժողովեցին ի միասին բազում զօրօք, և խորհուրդ արարին գալ գաղտագողի ի վերայ վանացն, և յաւարի առնուլ զանհուն կարասիս նորա, այսինքն. զկահ սպասուց և սրբութեանց եկեղեցւոյն։ Եւ յարուցեալ անցին ընդ Երասխ, և զանխլաբար եկեալ հասին յանկարծակի ի վերայ սրբոյ ուխտին, և իբր զհուր սաստիկ հեղան ի մէջ վանիցն, և որք կարացինն թաւթեցան ի վայր ի խրամն, և զերծեալ փախեան. և եպիսկոպոսն Տէր Յովհաննէս ոչ պատահէր ի տեղին։ Իսկ զայլսն ամենայն սրոյ ճարակ տային, և զեկեղեցին որ յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին էր լցին փայտիւ, և հուր հարեալ հրդեհեցին զզեղեցկայարմար շինուածն, և քանդեալ կործանեցին. կամեցան և զսքանչելի սիւնն կործանել զմեծ Տէր Յովհաննիսին, որ երկու ամաւ յառաջ քան զմեծ եկեղեցին էր կանգնեալ. և տեսեալ հրաշս ինչ ոչ իշխեցին հպիլ...»[25]։

Ճարտարապետ, քանդակագործ և նկարիչ Վարպետ Մոմիկի մասին ավանդությունը պատմում է, թե ինչպես նա ժամանակին փոխադարձ սիրով կապված է եղել Սյունյաց իշխանի դստեր հետ։ Իմանալով այդ մասին, իշխանը կանչում է Մոմիկին և ասում. «Աղջիկս կտամ քեզ, եթե կարողանաս ինձ համար երեք տարում մի վանք կառուցել»։ Մոմիկը անմիջապես գործի է անցնում։ Մոտակա ապառաժներից ահագին քարեր կտրելով, դրանք խնամքով տաշելով ու քանդակազարդելով. նա արագ բարձրացնում է մի հոյակապ երկհարկանի վանք։ Իմանալով, որ Մոմիկը ավարտելու վրա է իր կառույցը, իշխանն իր դստերը հասարակ քարգործ վարպետի չտալու համար խորամանկության է դիմում։ Նա պատվիրում է ծառային բարձրանալ նոր կառուցված վանքի գմբեթը և այնտեղից ցած հրել վարպետին։ Ծառան կատարում է իշխանի հրամանը և Մոմիկի տաշած վերջին քարը շիրմաքար է դառնում նրա համար (228)։

Ավանդությունն ունի որոշակի իրական-պատմական հիմքեր։ Իրական է, նախ, Վարպետ Մոմիկի մասին եղած հիշատակությունը՝ իբրև Եղեգնաձորի շրջանի Ամաղու գյուղից ոչ հեռու գտնվող Նորավանքի երկհարկանի նշանավոր եկեղեցու կառուցողի ու քանդակազարդողի։ Նա միջնադարյան այն նշանավոր արվեստագետն է, որին վերագրվում են ոչ միայն հիշյալ երկհարկանի հայտնի եկեղեցու կառուցումը, այլև Վայոց ձորում գտնվող որոշ խաչքարերի քանդակները։ Պատմական հիմքեր ունի, այնուհետև, Սյունյաց իշխանի հիշատակությունը։ Հայտնի է, որ XIII դարից Նորավանքը սկսում է վայելել Սյունյաց Օրբելյան իշխանների աջակցությունն ու հովանավորությունը, դառնալով Սյունիքի հոգևոր տերերի աթոռանիստ կենտրոնն ու տոհմական դամբարանը։ Հայտնի է նաև, որ Նորավանքի բոլոր շինությունները կառուցված են Օրբելյան իշխանական տան անդամների կողմից։ Ինչ վերաբերում է, մաս-

25 Ստեփանոս Օրբելյան, էջ 312—313։

նավորապես, Նորավանքի երկհարկանի հոյակապ եկեղեցուն, ապա այն շինել է սվել Բուրթել Օրբելյանը[26]։

Գալով ավանդության հենքը հանդիսացող Վարպետ Մոմիկի և Սյունյաց իշխանի դստեր սիրավեպին, ապա այն, ամենայն հավանականությամբ, վիպական-բանահյուսական ծագում ունի, քանի որ ժամանակակից գրավոր աղբյուրները (պատմիչներ, վիմական արձանագրություններ) այդ մասին ոչ մի հիշատակություն չունեն։ Պատմականն այստեղ նման կարգի սիրավեպերի համար բնորոշ ողբերգական վախճանն է, իբրև հետևանք միջնադարի պայմաններում հասարակության տարբեր խավերի միջև գոյություն ունեցող սոցիալական խորը անջրպետի։

Սանահնի նշանավոր վանքը կառուցող վարպետի մասին ավանդությունն ասում է, թե նա մի անդամ վեճի է բռնվում հարազատ որդու հետ։ Սա թողնում է հորը և տեղի իշխանի պատվերով, մի ենթավարպետի հետ, մոտակա գյուղում սկսում է նոր վանք կառուցել։ Լսելով այդ լուրը, հայրը ժամանակ անց գալիս է տեսնելու որդու աշխատանքի արդյունքը։ Ուշադիր ու լավ զննելով բարձրացված պատի շարվածքը, նա գոհունակությամբ ասում է. «Հախ պատ է» (այսինքն՝ լավ, ամուր պատ է) և գրկելով որդուն հաշտվում է նրա հետ։ Այդ օրվանից էլ, ասում են, վանքի անունը մնում է Հախպատ (240—241)։

Նմանօրինակ մի այլ ավանդության մեջ պատմվում է, թե ինչպես Մակարավանքը կառուցող վարպետը ուխտ է անում՝ մինչև չավարտի ամբողջ շինարարությունը, վերևից ցած չիջնի։ Որդին շենքի քարերը տաշելով ուրիշի ձեռքով հանձնում էր հորը։ Երբ ավարտվելու վրա է լինում շինարարությունը և մնում է միայն գմբեթը, քարտաշ որդին հիվանդանում, մեռնում է։ Հարազատները որոշում են որդու մահը գաղտնի պահել հոլից և նրա փոխարեն քար տաշելու աշխատանքը հանձնարարում են մեկ ուրիշ վարպետի։ Վերջինիս տաշվածքից հայրը կռահում է, որ դա որդու ձեռքի գործը չէ և կասկածում, որ նրա հետ դժբախտություն է պատահել։ Չկարողանալով դիմանալ ծանր վշտին, վարպետը վանքի գմբեթից ցած նետվելով ինքնասպան է լինում (239—240)։

Երկու ավանդություններում էլ ճշմարտացի արտացոլում են գտել մեր հնօրյա ճարտարապետների և քարգործ վարպետների կյանքն ու աշխատանքը, աղգակցական կապերը, նրանց միջև եղած համագործակցությունն ու հակամարտությունը, շրջապատի իրականության հետ ունեցած շփումը և այլն։

Հայտնի է, որ Հայաստանում, ինչպես հին դարերում, այնպես էլ ավելի ուշ, տարբեր տիպի արհեստավորներ, այդ թվում նաև որմնադիրներ ու քարտաշներ աշխատել են մեծ կամ փոքր խմբերով, ընդ որում հաճախ հայր ու որդի միասին։ Ղեկավար ունենալով իրենց վարպետներին, նրանք շրջել են վայրից վայր, կառուցել աշխարհիկ և հոգևոր բազմաթիվ շենքեր (բերդեր, կամուրջներ, պալատներ, վանքեր), դրա համար նախապես պատվեր ստանալով երկրի տերերից։

Մեզ ղբաղեցնող խնդրի տեսակետից պակաս ուշագրավ չեն նաև Հայաստանի նշանավոր կամուրջներին նվիրված ավանդությունները։

---

26 «Դիվան հայ վիմագրության», պրակ Գ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 29, 39, 210, 228 և հտ.։

Բասենի մոտ Արաքս և Մուրց գետերի խառնուրդի վրա գտնվող յոթ քարե կամարներով հոյաշեն կամուրջի մասին ժողովրդական ավանդությունն ասում է, թե մոտակայքում ապրող բնակիչները բազմիցս փորձել են ամրացնել Արաքսի կատաղի ալիքներից հաճախ ավերման ենթակա այդ կամուրջը, սակայն նրանց չի հաջողվել դիմագրավել գետի հախուռն հորձանքին։ Մի հասարակ հովիվ կամովին իր վրա է վերցնում այդ ծանր գործը և մեն-մենակ մեծ հմտությամբ ամրացնում է կամուրջի հիմքերը։ Ասում են, թե դրանից հետո Արաքսն այլևս անզոր է լինում ավերել կամուրջը և այն անխախտ մնում է իր տեղում։ Ասում են նաև, որ ի հիշատակ այդ ճարտար հովվի, կամուրջը դրանից հետո սկսում է կոչվել Հովվի կամուրջ (216)։

Պատմական Հայաստանի Բագրևանդ գավառում, Արածանի գետի վրա գտնվող հին ու գեղեցիկ կամուրջի վերաբերյալ գոյություն ունի մի ավանդություն, որի համաձայն այն ժամանակին կառուցվել է հայերի կողմից։ Երբ թշնամիները նրանց տեղահան են արել Արածանիի հովտից, գետը, իբր, փոխել է նախկին հունը և դադարել է հոսել կամրջի տակով։ Հայրենաթափ եղած հայերը հավատացած են, որ մինչև չվերադառնան իրենց բնաշխարհը, գետը չի հոսելու հին կամրջի տակով (221)։

Տիգրիս գետի վրա գտնվող Բավտու կամուրջի մասին ասում են, թե Գրիգոր Նարեկացին հիանում է այդ կամուրջը կառուցող վարպետի շնորհքով և դիմելով աստծուն մեղքերի թողություն ու արքայություն է հայցում նրա համար։ Հրեշտակը հայտնվում է Նարեկացուն և ասում. «Կամուրջ կառուցող վարպետը մեռած է և, իբրև կռապաշտ, գտնվում է դժոխքում, եթե ուզում ես, որ աստված արքայություն ուղարկի վարպետին, կենդանացրու նրան»։ Նարեկացին գալիս է մեռածի գերեզմանի մոտ, խաչակնքում է հանգուցյալի հող դարձած մարմինը և աղոթում է աստծուն։ Վարպետն անմիջապես կենդանանում է։ Նարեկացին խոստովանեցնում է նրան, մկրտում և նորից հող դարձնելով՝ հոգին փոխադրում է դրախտ (313)։

Սասնո գավառի Բաթման կոչված գետի վրա գտնվող համանուն կամրջի վերաբերյալ ժողովրդական ավանդությունն ասում է, թե այն կառուցել է Բաթման անունով մի վարպետ։ Ամեն անգամ, երբ նա փորձ է արել գետի մեջ դնելու կամրջի հիմքերը, ջուրը քշել, տարել է դրանք։ Այսպես կրկնվում է մի քանի անգամ։ Մի ծերունի Երազում նրան հուշում է, որ մինչև կամրջի հիմքում չթաղվի առաջին հանդիպած մարդը կամ կենդանին, շինարարությունը չի իրականանա։ Հաջորդ օրը վարպետը նկատում է, որ դիմացից գալիս են սիրած կինն ու իր որսի շունը։ Ամուսնուն ճաշ բերող կնոջ ոտքը հանկարծ քարին է դիպչում և կերակրամանը ձեռքից ցած է ընկնում։ Մինչև շունը կլակեր թափված կերակուրը, կինը հասնում է ամուսնու մոտ։ Իմանալով երազի մասին, կինը ասում է. «Միևնույն է մի օր մեռնելու էի. դիր ինձ կամրջիդ հիմքում, որպեսզի այն այլևս չքանդվի։ Բաթմանը կատարում է կնոջ խոսքը, և կամուրջն անխափան ավարտին է հասնում։ Երբ շինարարությունը լրիվ վերջանում է, վարպետը կամրջի ճակատին քանդակում է իր անձնազոհ կնոջ արձանը, որի երկու քարեղեն ստինքներից սկսում են կաթնաղբյուրներ բխել։ Կամրջով անցուդարձ անող մարդիկ խմելով այդ աղբյուրների ջրից, հագեցնում են իրենց ծարավը (222)։

Հիշատակված չորս ավանդություններից յուրաքանչյուրը յուրովի նշանա-

կալից է։ Բացի գեղարվեստական հետաքրքրությունից, դրանք ունեն որոշակի ճանաչողական և գաղափարական արժեք։

Հովվի կամրջի ավանդությունը ճշմարտացիորեն արտացոլում է շինարարական այն դժվարությունները, որ կապված են եղել տվյալ կամրջի հիմնադրման ու կառուցման աշխատանքների հետ (տեղանքի բարդությունը, Արաքսի սրընթաց ալիքները)։ Ուշագրավ է առանձնապես այն հանգամանքը, որ ժողովրդական ավանդախոսները նրա իրականացումը կապել են ոչ թե այս կամ այն մեծահարուստ անձնավորության հետ, ինչպես սովորաբար հանդիպում ենք մեր մատենագիրների մոտ, այլ մի հասարակ հովվի անվան հետ, անկախ այն հանգամանքից, թե իրականում ում ջանքերով ու ծախքով է գլուխ բերվել տվյալ կամուրջը։ Ավանդաստեղծ ժողովուրդը դրանով իսկ ընդգծել է իր երկրի նշանավոր հուշարձանների իրականացման գործում «հասարակ» մարդկանց ունեցած գործոն մասնակցությունը։

Արածանու կամրջի ավանդությունը խորհրդանշում է մի կողմից տվյալ վայրերում բնակվող հայության ողբերգական ճակատագիրը, մյուս կողմից՝ ակնարկում է հարազատ բնաշխարհի հանդեպ ունեցած նրանց նվիրական զգացմունքները։

Տվյալ ավանդության պատմական հիմքեր ունենալու անուղղակի վկայությունն են անգլիացի հայտնի գիտնական-ճանապարհորդ Լինչի հետևյալ տողերը. «...Որքան մենք կարողացանք դատել,— գրել է նա,— հնարավոր է, որ Մուրադ գետը (իմա Արածանին—Ա. Ղ.) երբևէ հոսել է քաղաքի պատերի տակով, բայց միջնադարյան քաղաքի կամուրջը գտնվում է քաղաքից ամենաքիչը երեք վերստ հեռավորության վրա դեպի արևմուտք։ ...Եվ իսկապես, քաղաքը ներկայացնում է կործանված փառքի, անհետացած մշակույթի պաթետիկ մի տեսարան, և այդ հատուկ տպավորությունը ավելի է սաստկանում անցյալից պահպանված հուշարձանների հետ նրա այժմյան ամայության պերճախոս հակադրությամբ։ Այսպիսով, մենք կարող ենք մտովին վերաստեղծել սքանչելի միջնաբերդերը, որոնք թերևս ծառայել են իբրև պալատ, կրկնակի պարիսպների վեհաշուք տեսքը, գեղանիստ ու զարդարուն աշտարակները, եկեղեցիների որմնանկարները, հրաշալի կամուրջը (ընդգծումը մերն է—Ա. Ղ.), սալահատակված լայն ճանապարհը։ Հայոց հանճարը ստեղծել է այդ կառույցները, թուրքը կործանել դրանք»[27]։

Բավտու կամրջի ավանդությունը ուշագրավ է ոչ միայն նրանով, որ ընդգծում է ճարտարապետական տվյալ կառույցի վարպետի հմտության հանդեպ Գրիգոր Նարեկացու ունեցած ակնածանքն ու հիացմունքը, այլև նրանով, որ բացահայտում է միջնադարի հայ հանճարեղ բանաստեղծի անսքող մտահոգությունը ժողովրդի ընդերքից ելած տաղանդավոր վարպետների հանդեպ, անգամ այնպիսի պարագաներում, երբ նրանք ունեցել են կրոնական այլ դավանանք։

Բաթմանա կամրջին նվիրված ավանդության պատմական ատաղձի վերաբերյալ մենք չունենք մատենագրական որևէ հիշատակություն։ Միայն ուշ ժամանակի աղգագրական աղբյուրներից գիտենք, որ հիշյալ կամուրջը երկար ժամանակ կանգուն է եղել։ Այն հանգչում է 4—5 մետր բարձրության հինգ սյուների վրա, ունի 50—60 մետր երկարություն և բավական մեծ լայնու-

[27] Х. Ф. Линч, Армения, т. 2, Тифлис, 1910, էջ 349—350։

թյուն[28]։ Առասպելախառն մի զրույցի համաձայն խնդրո առարկա կամուրջը գոյություն է ունեցել տակավին հեթանոսական ժամանակներում, երբ Գրիգոր Լուսավորիչը ավերել է տալիս Տարոնի գավառում գտնվող Ս. Կարապետի վանքի տեղում եղած հեթանոսական տաճարը, ոչնչացնում է քրմերին, իսկ նրանց մարմիններն էլ այրել տալով, մոխիրը թափել է տալիս Բաթմանա գետը[29]։

Մեզ համար տվյալ դեպքում էականը ոչ թե վերոհիշյալ զրույցն է, այլ ավանդության այն հաղորդումը, որի համաձայն Տարոնի Աշտիշատում և Հայաստանի այլ վայրերում կանգնեցված Վահագնի, Անահիտի, Աստղիկի և ուրիշ աստվածությունների հայտնի արձաններից բացի, ժողովրդի ստեղծագործական երևակայությունը հորինել է նաև քարգործ վարպետ Բաթմանի ձեռքերով կերտված, նրա սիրած կնոջ արձանը։

Մեզանում պահպանվել են առանձին ավանդություններ, որոնց մեջ հիշատակություն կա նաև հայկական քարի արվեստագործության շատ տարածված, բարձրարվեստ և բուն ազգային նկարագիր ունեցող այն հուշարձան-կոթողների վերաբերյալ, որոնք հայտնի են խաչքար, խաչարձան կամ էլ Ցասման խաչ անուններով։ Տարբեր տիպի ու գույնի քարերից պատրաստված այդ հուշարձան-կոթողները սովորաբար կանգնեցվում էին քաղաքներից հեռու, եկեղեցիների, վանքերի, գյուղերի մոտ, բլուրների վրա, արտերի եզրին և այլուր։ Խաչքարերը հանդիսացել են ժողովրդի, հայրենիքի, հավատի կամ որևէ այլ պատճառով զոհվածների ու նահատակվածների հիշատակը հավերժացնող խորհրդանիշները, համարվել մարդկանց վնաս հասցնող տարերային զանազան աղետների առաջն առնելու մոգական զորությամբ օժտված, աստծու ցասումը մեղմող կոթողներ[30]։

Բերենք մի բնորոշ օրինակ միայն։ Կոտայքի շրջանի Ջրվեժ գյուղի անվան ծագման կապակցությամբ պատմում են, թե մի տարի այս կողմերում սաստիկ երաշտ է լինում։ Երկու գյուղերի ծերերը խորհուրդ են անում մի ճար գտնելու համար։ Նրանցից մեկն առաջարկում է լայնացնել մոտակա սարից եկող առվի հունը, որպեսզի ավելացած ջուրը բավականացնի։ Մի երկու օրում առվի հունը լայնացնում են։ Ջուրն իսկապես ավելանում է, բայց տեսնում են, որ այն դարձյալ չի կարող բավարարել երկու գյուղերի պահանջը։ Սկսում են վիճել, թե ո՞վ է առաջինը ջրելու։ Վեճը քանի գնում թեժանում է։ Մի ծերուկ առաջարկում է՝ «Ով առաջինը կարողանա աղբյուրի ակին մատաղ անել՝ ջուրը նրան լինի»։ Երկու գյուղերի երիտասարդներն էլ թռչում են դեպի իրենց նախիրները։ Բոլորն անհամբեր սպասում են նրանց վերադարձին։ Շուտով երևում է հարևան գյուղի երիտասարդներից մեկը՝ ոչխարը ուսին։ Գյուղացիների սիրտը ահ է ընկնում։ Նրանք սկսում են մտածել, որ երաշտը ոչնչացնելու է իրենց արտերը և գյուղը սովահար է լինելու։ Այդ միջոցին մի գեղջուկ երիտասարդ հանկարծ հանում է գրպանից դանակը և տեղն ու տեղը մորթում է ինքն իրեն։ Վեճը լուծվում է այդ երիտասարդի գյուղի օգտին և ջրի հերթը, ըստ պայմանի, նրանց է հասնում։ Այն տեղում, ուր ընկնում է անձնազոհ երիտասարդը, համագյուղացիները մի խաչքար են կանգնեցնում, որին

28 Վ. Պետոյան, Սասնո աղգագրությունը, էջ 27—28։
29 Նույն տեղում, էջ 28—29, և հտ.։
30 Գ. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց, Կ. Պոլիս, 1874, էջ 117—118։

երաշտի ժամանակ ուխտի են գնում, իսկ գյուղն էլ այդ օրվանից սկսում է կոչվել Ջրվեճ (157)։

Ինչպես ավանդություններից շատերը, ներկա պատումը ևս, անշուշտ, ունեցել է իր իրական հիմքերը, պատմական ատաղձը։ Թեև այսօր դժվար է անվերապահորեն պարզել այն, սակայն մեր ձեռքի տակ եղած տվյալների հիման վրա հնարավոր է ինչ-որ չափով հավաստել այդ ատաղձի մեզ հետաքրքրող մասը և, որ առավել կարևոր է ներկա դեպքում, հաստատել տվյալ վայրում խաչքարի գոյությունը, նրա կանգնեցման առարկայական պատճառը։

Ավանդությունը, ամենայն հավանականությամբ, սկզբնապես կապված է եղել ջրին մատուցվող զոհաբերության՝ Հայաստանում գոյություն ունեցող հնօրյա սովորույթի հետ։ Հետագայում է միայն, որ այն, պահպանելով իր միջուկը, միացել է մեր երկրի շատ վայրերում ժամանակին ջրի համար տեղի ունեցած բազմաթիվ արյունահեղ վեճերից մեկի հետ։ Ավանդության ստեղծման հանգամանքների վրա լույս է սփռում մի վիմական արձանագրություն, որն ընդօրինակված է Ջրվեժ գյուղի բլրի լանջին, հին գերեզմանոցի մոտ, այգու մեջ գտնվող միայնակ գերեզմանին դրված տապանաքարից։ Վերջինիս տակ, տեղի բնակիչների ասելով, թաղված է հիշյալ ավանդության հերոս երիտասարդը։ Ահա այդ արձանագրությունը. «Այս տուն սդո... (խա)չատրի, որ սպանաւ ի վերա ջրի Ջրվիժո կիսաւրեա ել ի յաշխարհէ եւ եթող կսկիծ ծնօղաց իմոց որք երկրպագէք սուրբ նշանիս յիշեսջիք ի տէր թ(վին) ։ՈՒԲ։ Վարդ»։ Տապանաքարի մոտ ժամանակին կանգնեցված է եղել մի սքանչելի խաչքար, որը, ամենայն հավանականությամբ, նվիրված է եղել ավանդության մեջ հիշատակված անձնազոհ երիտասարդին։ Ենթադրվում է, որ տապանաքարի արձանագրության տակ եղած «Վարդ» ստորագրությունը կարող է եղած լինել ոչ միայն արձանագրության, այլև տվյալ խաչքարը փորագրող վարպետի անունը[31]։

Մաշտոցի անվ. Մատենադարանի № 7029 ձեռագրի մեջ (էջ 39բ) կա մի ավանդություն, ըստ որի Դեդրե անունով հոնը ժամանակին ասպատակում է Հայաստանը։ Մուշեղ սպարապետը, ճակատամարտի ելնելով թշնամու դեմ, անձամբ սպանում է նրան։ Նույն ավանդության համաձայն, մի ասորի ճարտար վարպետ էլ այդ առթիվ պողպատե գրչով քարի վրա քանդակում է Մուշեղ սպարապետի արձանը, նստած սպիտակ երիվարի վրա, ոտքերի տակ՝ սպանված հոնը։

Չնայած իր սեղմ ծավալին, ավանդությունը պատմական արժեքավոր տվյալներ է պարունակում և արժանի է առանձնակի ուշադրության։

Մասնագիտական գրականության մեջ բազմիցս արծարծված և համապատասխան փաստերով հիմնավորված է հայ և ասորական ճարտարապետության ու քարի արվեստագործության փոխառնչությունների հանգամանքը վաղ միջնադարում[32]։ Բերված ավանդությունը մի նոր փաստ է ավելացնում այդ ուղղությամբ, որը ցարդ ուշադրության չի արժանացել։ Նման պատմական մի փաստ է նաև հոն զորավարի Հայաստանում կատարած ասպատակության հիշատակությունը։ Դա տարբեր դարերում և մասնավորապես VI դա-

---

31 Н. М. Токарский, Джрвеж, кн. 1, Ереван, 1959, էջ 6։

32 A. Khatcatrian, L'architecture Arménienne du IV-e au VI-siecle, Paris, 1971, էջ 92—97։ А. Л. Якобсон, Армения и Сирия («Византийский временник», т. 37, М., 1976, էջ 206)։

րի սկզբներին հոների կողմից Հայաստանի վրա կատարված հաճախակի հարձակումներից մեկի հիշողությունն է։

Ինչ վերաբերում է Մուշեղ Մամիկոնյանի կողմից հոն զորավարին սպանելուն, ապա այդ հիշատակությունը, ամենայն հավանականությամբ, այլափոխված բանահյուսական արձագանքն է սասունցի Մժեժ Գնունի իշխանի կողմից VI դարի սկզբներին հոներին տված մեծ ջարդի և Հայաստանի սահմաններից նրանց վտարման[33]։ Տարբերությունն այն է, որ Մժեժ իշխանին ավանդության մեջ փոխարինել է ժողովրդի կողմից սիրված ու մեծարված Մուշեղ Մամիկոնյանն իր նշանավոր սպիտակ երիվարով։

Հայ ժողովրդական բանահյուսության հետևյալ ժանրը, ուր ասկա են քարի արվեստագործության արձագանքներ, ժողովրդական երգն է։ Վերջինիս տարբեր տեսակների մեջ կարելի է հանդիպել ինչպես փայտաշեն, այնպես էլ քարաշեն կառույցների (տուն, տաճար են) հիշատակության փաստերի։ Դրանք սերտորեն կապված են երգերի հեղինակների ու կատարողների ապրումների ու մտորումների, նրանց կենցաղի, բնական ու հասարակական միջավայրի հետ։ Ուիշտ է, այդ հիշատակությունները կրում են հիմնականում բանաստեղծական այլաբանության կամ խորհրդանիշի բնույթ, բայց դրանց նյութը բոլոր դեպքերում մնում է իրական կյանքը, քարի արվեստագործության այս կամ այն հուշարձանը՝ իր առանձնահատկություններով ու մանրամասներով։

Ցայտուն օրինակ է այս տեսակետից «Դովք տուն-տաճարի» խորագրով միջնադարյան ժողովրդական երգը, որը կատարվել է նորապսակների տան օրհնության ժամանակ։ Երգի մեջ ակնարկված են տաճարի կառուցման համար օգտագործված շինանյութերը, դրանց մշակման եղանակը, տաճարի մեծ բարձրությունը և շրջապատի բնության հետ ունեցած ներդաշնակությունը։

Առանձնապես ուշագրավ են քաջանց բերած քարերի և նիշից բերված գերանների հիշատակության փաստերը։ Տվյալ երգի մեջ պատկերված տուն-տաճարը մեզ հիշեցնել է տալիս հայկական ժողովրդական տան ճարտարապետությունից սերող, հաստաբետ որմնասյուների վրա հանգչող մեր հնօրյա փայտագմբեթ եկեղեցիների հորինվածքը, երբ, ինչպես հայտնի է, իբրև շինանյութ, համատեղ կիրառում էին գտնում և՛ փայտը, և՛ քարը[34].

... Ա՛ս տունս սատուծով շինած,
Իր ամէն զօրօքն օրինած,
Քարերն էր Քաջանց բերած,
Հիմն ածած հին ժարգարէաց.
Գերանն էր Նշու բերած,
Հարիգայ. կուսանք էր սաչած,
Տաշած էր, սաշեղ հանած,
Տաշելով սահարս օրինած,
Եօթս բարձր էր և ի վեր քաշած,
Թուխ ամպին հետ կռվեցուցած...[35],

---

33 Լեո, Հայոց պատմություն, հատ. 3, Երևան, 1947, էջ 158։

34 Ս. Վարդանյան, Հայկական ժողովրդական բնակելի տների հարաբերակցությունը, Երևան, 1959, էջ 121 և հտ.։

35 Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 488—470։

Նման տիպի մի ուրիշ ստեղծագործություն է հին գուսանական ժողովրդական սիրո «հայրենի» հետևյալ քառյակը, ուր տրված է Հայաստանի անտառախիտ ու ժայռոտ լեռնազանգվածներից վեր խոյացող միջնադարյան քարակոփ բերդերից մեկի նկարեն պատկերը.

— Քո տունն ի յանտառ մորին,
Եւ քո դուռն ի դէմդ ի ժայռին.
Քո բերդն ի զանճիլ նման,
Ու հազար մի սար զանձիլին[36],

Մի ուրիշ ժողովրդական երգի մեջ, որը գրի է առնված մեր դարի 30-ական թթ. և ասվել է պատ շարողների կողմից, հիշատակվում են այն քարատեսակների անունները, որոնք օգտագործվել են մեղանում քարե շենքերի պատերը բարձրացնելու համար։ Ահա մի հատված այդ երգից.

Դե՛ հա, դե՛ հա,
Քար տվեք.
— Ի՞նչ քար վարպետ,
Ասա, որ տամ։

— Դե՛ ռու քար,
Համմէ բռնի։
— Ահան վարպետ,
Բրռնի տեսնեմ։

— Դե՛ դուզամ քար,
Համմէ բռնի։
— Ահան վարպետ,
Բռնի տեսնեմ։

— Դե՛ միջնաքար,
Համմէ բռնի։
— Ա՛ռ միջնաքար,
Բռնի տեսնեմ...[37],

Երգը ծանոթացնում է Հայաստանում շինարարության մեջ օգտագործվող քարի տեսակներին (ռու քար, դուզամ քար, միջնաքար և այլն), վերարտադրում պատ շարելու աշխատանքի եղանակը, վարպետի ու սրան սպասարկող քարտաշ բանվորի միջև տեղի ունեցող երկխոսությունը։ Պակաս կարևոր չէ և այն հանգամանքը, որ երգի կարճատող ոտանավորի պարբերաբար կրկնվող հատածների միջոցով բացահայտվում է քարը բանվորի կողմից պատի վրա գտնվող վարպետին փոխանցելու աշխատանքային պրոցեսի ռիթմական ուրույն նկարագիրը։

Քարի արվեստագործությունը մեղանում իր հետքն է դրոշմել անգամ այնպիսի մանրակերտ բանահյուսական ստեղծագործությունների վրա, ինչպիսիք են ժողովրդական առածները։ Այստեղ մենք հանդիպում ենք ուշագրավ հիշատակությունների քարի մշակման ու կիրառման զանազան եղանակների վերաբերյալ։

---

[36] Մ. Արեզյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 157։
[37] Ա. Ղանալանյան, Հայ շինականի աշխատանքի երգերը, Երևան, 1937, էջ 207։

Այդ կարգի հայկական առածներից են. «Տաշած քարը գետնին չի մնա», «Անգին քարը ցեխումն էլ գին ունի», «Ամեն մարդի հետ հաց չի ուտվի, ամեն քար հրմքի մեջ չի դրվի», «Լավ տաշված ոոքը (անկյունաքար) պարապ չի մնա» և այլն[38]։ Ունենալով իրենց ժանրին հատուկ որոշակի տյլաբանական իմաստ (օգտակար, պիտանի բանը չի կարող անուշադրության մատնվել, մարդը գնահատվում է իր արժանիքներով), տվյալ ստեղծագործություններն ուղղակի իմաստով ընդգծում են քարի կիրառական կարևոր դերը շինարվեստի համար։

Նշված փաստերով չի սահմանափակվում առծարծված հարցը։ Կարելի էր բերել ուրիշ փաստեր ևս։ Կարծում ենք, սակայն, որ եղածն էլ բավական է հավաստելու համար այն իրողությունը, որ բանահյուսական սկզբնաղբյուրներում պահպանված համապատասխան հիշատակությունները զգալի չափով լրացնում են այն նկատելի բացը, որ առկա է վաղ և ուշ միջնադարի մեր մատենագիրների մոտ հայկական ճարտարապետության և քարի արվեստագործության վերաբերյալ։ Այդ հիշատակությունների արժեքը ոչ այնքան առարկայական որևէ տվյալի հաստատման մեջ է, որքան այն ընկալման, որ ունեցել են Հայաստանի ժողովրդական լայն զանգվածներն իրենց հայրենիքում գտնվող նյութական մշակույթի հուշարձանների մասին և այն բնութագրի, որ տվել են նրանք այդ հուշարձանները ստեղծողներին։

ОТРАЖЕНИЕ ЗОДЧЕСТВА И КАМНЕРЕЗНОГО ИСКУССТВА В АРМЯНСКОМ ФОЛЬКЛОРЕ

Академик АН АрмССР А. Т. ГАНАЛАНЯН

(Резюме)

В средневековых письменных источниках сохранились скудные сведения об армянском зодчестве и камнерезном искусстве. Упоминая тех или иных заказчиков и меценатов, наши летописцы редко называли имена искусных мастеров и строителей памятников и умалчивали об обстоятельствах их создания. Этот пробел письменных источников частично восполняется данными, сохранившимися в устном народном творчестве. В отличие от средневековых летописцев, армянские народные сказители неоднократно обращались к окружавшим их крепостям, мостам, дворцам, монастырям и другим памятникам, своеобразно описывали их, называли имена создателей.

С этой точки зрения весьма значительны сведения, сохранившиеся в древних мифологических сказаниях. Герои армянского народного эпоса, и особенно его центральный персонаж Давид Сасунский, выступают не только как отважные богатыри, защищающие родную землю от иноземных врагов, но и как строители крепостей, мостов, монастырей. Зодчество и камнерезное искусство особенно широко отразились в армянских преданиях. Здесь сохранились данные об обстоятельствах созда-

38 Ա. Ղանալանյան, Առածանի, Երևան, 1960, էջ 127։

ния, значении, внешнем виде многих архитектурных памятников Восточной и Западной Армении, о жизни, трудовых условиях их создателей—мастеров и рабочих. Не менее любопытны упоминания об архитекторах-строителях в армянских волшебных сказках. Здесь мастера обычно в очень короткий срок возводят какое-либо замечательное здание (крепость, дворец). Сведения об отдельных архитектурных сооружениях, об их размерах и гармоничной связи с окружающим ландшафтом, о строительных материалах и способах их обработки мы находим также в произведениях армянского лирического и обрядового фольклора, относящихся к разным векам. Ценные высказывания о камне, о разнообразных способах его обработки и применения встречаются в армянских пословицах и поговорках.

Все это свидетельствует о важном значении, которое имеют данные устного народного творчества для изучения архитектурных памятников и камнерезного искусства Армении.